ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հ.01/27.1/15174-2025 գրությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան, Շենգավիթ վարչական շրջանի Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.31/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 152.55քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08092025-01-0090 վկայական/ նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Ներքին Չարբախ 3-րդ փողոց հ.31/13 հասցեում նախատեսվող Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի ստորգետնյա ավտոկայանատեղի մուտք կազմակերպելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է համայնքային սեփականություն հանդիսացող Երևան, Շենգավիթ վարչական շրջանի, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.31/5 հասցեում գտնվող համայանքային սեփականություն հանդիսացող 152.55քմ մակերեսով հողամասը որպես նվիրաբերություն տրամադրել Հայաստանի Հանրապետությանը՝ Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի ստորգետնյա ավտոկայանատեղի մուտք կազմակերպելու նպատակով:

Պետական սեփականություն հանդիսացող Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց հ.31/13 հասցեում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցմանհ.31052023-01-0335 վկայականում ամրագրված հողամասի սահմաններում) ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ ՈՀՀՔԿ-ՀՄԱԽՁԲ-24/6 պայմանագրի շրջանակներում կատարվում են Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Տվյալ տարածքում նշված աշխատանքների իրականացման համար 2022 թվականի հունիսի 15-ին Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է հ.01/18-07/1-Դ-4490-515 նախագծման թույլտվություն /ՃՀԱ/: Ներկայումս իրականացվող ծրագրի կառուցապատող է հանդիսանում ՀՀ քաղաքաշինության կոմիտեն:

Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում հողատարածքի խիստ սահմանափակ լինելու պատճառով մարզահամալիրի ստորգետնյա ավտոկայանտեղի մուտքի կազմակերպումը հնարավոր է իրականացնել Երևան համայնքին պատկանող 01-011-0238-0035 կադաստրային ծածկագրով՝ 152.55քմ մակերեսով հողամասից /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08092025-01-0090 վկայական/:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ անհրաժեշտություն է առաջանում 152.55քմ մակերեսով հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը և կնքել հողամասի նվիրաբերության պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում՝ հողամաս տրամադրելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ